



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն կրարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 48

ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՂԱՔԸ

Մեծ է Տէրը, մեր Աստուածը,
 եւ ամէն օրհներգութեան արժանի՝
 իր քաղաքին մէջ, իր սուրբ լեռան վրայ:
 Իր բարձրութեամբ գեղեցիկ է,
 ամբողջ աշխարհի ուրախութիւնն է Սիոն լեռը,
 Աստուծոյ բնակավայրը, մեծ Թագաւորին քաղաքը:
 Աստուած ներկայ է անոր ամրութիւններուն մէջ,
 եւ ցոյց տուած է՝ թէ ինքն է իրաւ ամրոցը:
 Ահա թագաւորները հաւաքուեցան,
 եւ միասնաբար յարձակեցան քաղաքին վրայ.
 բայց երբ գայն տեսան՝ ապշեցան,
 զարհուրեցան եւ փախուսարի դիմեցին:
 Դողը բռնեց զիրենք, ինչպէս երկունքը կը բռնէ ծննդական կինը,
 կամ ինչպէս որ արեւելքէն փչող հովը կը խորտակէ Թարշիշէն եկող նաւերը:
 Ինչ ըսեր էինք՝ այժմ մեր աչքերով տեսանք Ամենակալ Տիրոջ քաղաքին մէջ,
 մեր Աստուծոյն քաղաքին մէջ.
 Աստուած կանգուն պիտի պահէ գայն յաւիտեան:
 Քու տաճարիդ մէջ, ով Աստուած,
 մենք մշտական հոգածութեանդ մասին կը խորհինք:
 Քու անունդ, ով Աստուած, ծանօթ է աշխարհի չորս ծագերուն,
 եւ բոլորը քեզ կ'օրհներգեն:
 Արդար են գործերդ:
 Թող ուրախանայ Սիոն լեռը, թող ցնձան Յուդայի քաղաքները,
 արդար դարաստրաններունդ համար:
 Ով ժողովուրդ, Սիոնի շուրջը դարձէք, անոր չորս դին պարզեցէք,
 անոր աշտարակները համրեցէք:
 Լաւ դիտեցէք պարիսպները, զննեցէք անոր ամրութիւնները,
 որպէսզի պարմէք զալիք սերունդներուն:
 Մեր Աստուածն է ասիկա, մեր Աստուածը՝ միշտ եւ յաւիտեան.
 ինք մեզ պիտի առաջնորդէ մինչեւ վախճան:

ՇԱՐԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՂԱՔԸ**

Որքան նիւթական պարկերներով ներկայացուած է այս Սաղմոսը, նոյնքան եւ հոգեւոր իմաստով: Այս Սաղմոսը կը ներկայացնէ Աստուծոյ քաղաքը, եւ այդ քաղաքին գովքը կը հիւսէ: Առաջին համարը դաւանութիւն է, խոստովանութիւն Աստուծոյ ով ըլլալուն մասին: Մեծ է Տէրը, մեր Աստուածը: Այդպէս է՝ մեր դաւանութիւնը այսօր: Մեծ է Տէ՛րը: Եթէ մեծ է Տէրը, ապա ինչո՞ւ վախնալ ու ահ ու դողի բռնուիլ ուրիշներու մեծութենէն: Եւ ամէն օրհներգութեան արժանի, իր քաղաքին մէջ իր սուրբ լեռան վրայ: Ընդհանրապէս Աստուծոյ քաղաք իբրեւ ճաշնչցուած էր Երուսաղէմ քաղաքը, որ նաեւ կը նշանակէր՝ խաղաղութեան քաղաք: Իսկ Սիոն լեռը, որպէս Աստուծոյ սուրբ լեռը, որուն վրայ նաեւ կառուցուած Աստուծոյ փառարար: Բայց այս բոլորը որպէս նախապարաստական ու նախաճաշակ Աստուծոյ իսկական քաղաքին ու Անոր լեռան ու փառարարին: Որովհետեւ առիթով մը Քրիստոս պիտի յայտարարէր ըսելով, Աստուած ձեռագործ փառարաններու մէջ չի բնակիր, այլ՝ անձեռագործ: Աստուած Հոգի է, եւ հոգիներու մէջ կը բնակի: Հերեւաբար, այս արքայապարտիւնները որքան նիւթական քաղաքին մասին ըլլան, սակայն, անոնք խորհրդանշանակ ու հեգուր իմաստով Աստուծոյ Եկեղեցիին մասին են, այն Եկեղեցին, որուն Պօղոս Առաքեալ կը կոչէ Քրիստոսի խորհրդաւոր մարմինը: Այն եկեղեցին, որուն համար Քրիստոս Ինք պիտի ըսէր, դժոխքի դռներն իսկ պիտի չկարենան յաղթել: Ուրեմն, Աստուծոյ քաղաքը՝ Եկեղեցին իր բարձրութեամբ գեղեցիկ եւ ամբողջ ածխարհին ուրախութիւնը եղող, որպէս Աստուծոյ բնակավայրը, որովհետեւ Աստուած հոն է որ կը բնակի, այսինքն՝ Եկեղեցոյ մէջ, այսինքն՝ հոգիներու մէջ, այն հոգիներուն, որոնք զԻնք կը հիւրընկալեն, ու իրենց սրբի, հոգիի դռները լայն կը բանան, որպէսզի ներս մտնէ եւ այնպէս բնակութիւն հաստատէ: Այսօր ալ երբ եկեղեցի կը յաճախենք, որպէս Աստուծոյ փունը, ինչ է արդեօք մեր պարկերացումն ու ըբռնումը, թէ Աստուած հոն է՞, եւ կամ հոն կերթանք հանդիպելու Աստուծոյ հետ, յետոյ, սակայն, երբ ամէն ինչ կ'աւարտի եւ մենք մեր փունները պիտի վերադառնանք, ո՞ր է Աստուած: Ահա լաւագոյն պահը, երբ կը յաճախենք, մեր հոգիները վերածենք փառարարի, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ, յիշեցնելով Կորնթացիներուն, «Չէք գիտեր, որ դուք Աստուծոյ փառարան էք»: Տաճար մը որ այնքան գեղեցիկ, վայելուչ, ու մանաւանդ՝ աշխարհին ուրախութիւնը եղող: Ահա այդ փառարարին մէջ է Աստուծոյ ներկայութիւնը, ու մանաւանդ՝ Անոր գորութիւնը, եւ Ան է իրաւ ամբողջ, այսինքն՝ նեղութեան եւ դժուարութեան ժամանակ պաշտպանը:

Սաղմոսը կը շարունակէ եւ կը ներկայացնէ, որ «աշխարհի թագաւորներ հաւաքուեցան, ու միասնաբար յարձակեցան Աստուծոյ քաղաքին վրայ, բայց երբ զայն փեսան ապշեցան, զարհուրեցան եւ փախուստի դիմեցին»: Պարմականօրէն գիտենք որ փարբեր փարբեր առիթներով, փարբեր փարբեր կայսրութիւններ, թագաւորութիւններ յարձակեցան ու կոտորեցին ու ւներեցին Երուսաղէմ քաղաքը եւ փառարար: Եթէ նոյնիսկ եղան պահեր, որ շարեր զարհուրեցան, շարեր փախուստի դիմեցին, բայց եւ այնպէս ուրիշներ կոտորեցին, քաղաքը այրեցին, փառարար կործանեցին: Բայց այսպէս արքայապարտիւնը Աստուծոյ քաղաքին, Աստուծոյ փառարարին, Աստուծոյ Եկեղեցիին է, որքան ալ ժամանակներու ընթացքին ենթարկուեցաւ հալածանքի, կոտորածի, նահապակութեան, բայց երբեք չկրցան խորտակել, որովհետեւ անիկա Աստուծոյ պաշտպանութիւնն է որ ունի, որովհետեւ այդպէս խոստացաւ Քրիստոս ըսելով. «նոյնիսկ դժոխքի դռները պիտի չկարենան յաղթել»: Ահա փեսնելով դող բռնեց զիրենք եւ ցաւ, նման այն ցաւին որ կ'ունենայ յղի կինը, եւ կամ այնպիսի վիճակ մը, ինչպէս արեւելքէն փչող հովը կը խորտակէ Թարշիշէն եկող նաւերը:

Ահա ինչ որ անցեալին խօսքով ներկայացուած էր, հասած է պահը աչքերով փեսնելու Աստուծոյ քաղաքին շքեղութիւնը, Աստուծոյ ներկայութիւնը, ու մանաւանդ՝ Աստուծոյ խոստովանին համաձայն զայն կանգուն պահելը: Աստուծոյ անունը ծանօթ պիտի դառնայ աշխարհի չորս ծագերուն, եւ ժամանակներ պիտի գան երբ բոլորը պիտի օրհներգեն զԱստուած: Աստուծոյ գործերը արդար են: Ահա այդ արդար գործերուն համար Սիոն լեռը թող ուրախանայ, Յուդայի քաղաքները թող ցնձան:

Ի վերջոյ, կոչ կ'ուղղուի ժողովուրդին, Սիոնի շուրջը դառնալու, անոր աշտարակները համբելու: Պարիսպները դիպելու եւ ամրութիւնները գննելու, որպէսզի պարմեն գալիք սերունդներուն: Աստուծոյ փառարարին մասին խօսած ժամանակ, խորքին մէջ Աստուծոյ մասին խօսելու, որ միծմր եւ յափտեան կայ, եւ Ինք է Իր ժողովուրդը առաջնորդողը մինչեւ վախճան, աւարտ: